ԱԳՐՈ Լրատու

ՄԱՐՏ 25 - ԱՊՐԻԼԻ 9 2015 Թ. ԹԻՎ 7 (2062)

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆ

Նախարարը շնորհավորել է ոլորտի աշխատակցուհիներին

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը շնորհավորել է համակարգի կին աշխատակիցներին՝ Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ:

«Դարեր շարունակ հայ կինը կանգնած է եղել տղամարդու կողքին, նրան հավասար պաշտպանել հայկական օճախը, տունն ու հող հայրենին: Այսօր էլ հայ կինն իր արժանի տեղն ունի երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Հատկապես արժանահիշատակ է կանանց դերը գյուղատնտեսության զարգացման գործում, որտեղ նրանք շարժիչ ուժ են և գերակշիռ մաս են կազմում», – նշել է նախարարը՝ իր շնորհավորանքի:

Շնորհավորելով նախարարության աշխատակցուհիներին տոնի առթիվ՝ Սերգո Կարապետյանը մաղթել է նրանց քաջառողջություն, երջանկություն և նորանոր հաջողություններ աշխատանքային գործունեության մեջ և անձնական կյանքում: Գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալով պարգևատրվել է «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության առաջատար գիտաշխատող-սելեկցիոներ Սվետլանա Հայրապետովան: Ոլորտի մի շարք աշխատակցուհիներ գյուղատնտեսության ոլորտում ունեցած ներդրումների համար պարգևատրվել են նախարարության շնորհակալագրերով:

ՀԱՆԳԻՊՈՒՄ

Բարենպաստ պայմաններ՝ տնտեսությունների համար

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կազմակերպվել էր հանդիպում, որին հրավիրվել էին մի խումբ ջերմոցատերեր՝ պտուղ-բանջարեղենի արտահանման ընթացակարգերը ներկայացնելու նպատակով: Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալներ՝ Սամվել Գալստյանը, Գառնիկ Պետրոսյանը, Ռոբերտ Մակարյանը, ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության ծառայության պետի տեղակալ Հովհաննես Հայրապետյանը, բուսասանիտարիայի տեսչության պետ Արթուր Նիկոյանը և այլոք:

Փոխնախարար Սամվել Գալստյանը նշել է, որ Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը, լայն հնարավորություններ է ստեղծել հանրապետությունում պտուղբանջարեղենի արտադրության ու արտահանման ծավալների ավելացման համար, քանի որ այժմ ընթացակարգերն առավելագույնս պարզեցված են և, այս առումով, գործող պայմանները խիստ բարենպաստ են գյուղացիական տնտեսությունների համար: Փոխնախարար Գառնիկ Պետրոսյանն, իր հերթին, հավելել է, որ գյուղմթերքի տեղական արտադրության զարգացման համար պետությունը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցառումները: ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության ծառայության պետի տեղակալ Հովհաննես Հայրապետյանը և բուսասանիտարիայի տեսչության պետ Արթուր Նիկոյանը հանգամանորեն ներկայացրել են պտուղբանջարեղենի արտահանման ընթացակարգերի փոփոխությունները: Մասնավորապես՝ ընդգծվել է, որ ԵՏՄ տարածքում արտահանում իրականացնելու դեպքում, այժմ տնտեսավարողից որևէ փաստաթուղթ չի պահանջվում և դրա համար նրանք որևէ տեսակի վճարումներ չեն իրականացնում. գործընթացն առավելագույնս պարզեցված է, և ծախսվող ժամանակն անհամեմատ կրճատվել է: Միակ փաստաթուղթը, որն անհրաժեշտ է ձեռք բերել արտահանում իրականացնելիս, տեսչության կողմից տրվող բուսասանիտարական հավաստագիրն է, որը նույնպես տրամադրվում է անվճար: Հավաստագիրը տրվում է մաքսային ձևակերպումներ իրականացնելիս, ծառայության տեսուչների կողմից՝ սեղմ ժամկետներում: Պատասխանատուները հավելել են, որ տեսուչների հեռախոսահամարները հրապարակված են www.snund.am կայքում, ինչպես նաև հորդորել են ցանկանացած հարցի դեպքում զանգահարել ծառայության թեժ գծի հեռախոսահամարով՝ վստահեցնելով, որ դրանց սեղմ ժամկետներում, պատասխաններ կտրվեն: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև տեղական արտադրանքի խթանմանը, որակին, մրցունակությանը, ինչպես նաև՝ վնասատուների դեմ պայքարի միջոցառումներին առնչվող հարցեր:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Վարչապետը դրական է գնահատել նախապատրաստական աշխատանքները

Վարչապետ Հովիկ Աբրահամյանն այցելել է Արմավիրի մարզ: Կառավարության ղեկավարը նախ եղել է Եղեգնուտ համայնքում գտնվող Արմավիրի թռչնաբուծական ֆաբրիկայում, ծանոթացել վերջինիս գործունեությանը և ներդրումային ծրագրերին:

2013 թվականին հիմնադրված ֆաբրիկան զբաղվում է թռչնամսի արտադրությամբ: Ֆաբրիկայի ղեկավարները տեղեկացրել են, որ ընթացիկ տարում ծրագրվում է թռչնամսի արտադրական ծավալները հասցնել 4 հազար տոննայի, ինչը, նախորդ տարվա համեմատ, կլինի 30 տոկոսով ավել: Արտադրական ծավալներն ավելացնելու նպատակով, վերջերս ֆաբրիկայում ներդրվել են ժամանակակից նոր սարքավորումներ, այդ թվում՝ ինկուբատորներ, ինչի արդյունքում ֆաբրիկան այլևս ստիպված չի լինի թռչունները ներկրել արտերկրից (Ֆաբրիկայում կատարված ներդրումները գնահատվում են 5-6 մլն դոլար):

Հ. Աբրահամյանը նշել է, որ թռչնաֆաբրիկայում թռչնամսի արտադրության ուղղությամբ կատարվել են լուրջ աշխատանքներ: «Մենք պետք է խրախուսենք մեր արտադրողներին և հնարավորություն տանք, որպեսզի ավելացնեն արտադրական ծավալները, ինչը կստեղծի նոր աշխատատեղեր, ժողովորդին կապահովվի տեղական արտադրանքով: Հայաստանը տարեկան ներկրում է 30-31 հազար տոննա թռչնամիս,

↳2

Կարևորվում է վերամշակող ընկերությունների արտադրանքը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ագրոարդյունաբերության ոլորտի միությունների ղեկավարներին հրավիրել էր խորհրդակցության: «Գյուղատնտեսությունը մեր երկրի տնտեսության գերակա ճյուղերից մեկն է, սակայն նրա զարգացումն անհնար է պատկերացնել առանց ոլորտում գործող միությունների ակտիվ գործունեության», – նշել է նախարարը:

Նախարարի խոսքով՝ ագրոարդյունաբերության ոլորտի միություններին հարկավոր է մշակել իրենց ճյուղերի զարգացմանն ու ընդլայնմանն ուղղված համապատասխան ծրագրեր և սերտորեն համագործակցել պետական հատվածի հետ: Նախարարը նաև հավելել է, որ միությունների գործունեության ակտիվացումը բխում է նաև պետության շահերից՝ նկատի ունենալով Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելու հանգամանքը: Հանդիպմանը քննարկվել են նաև վերամշակող ճյուղի ներկա խնդիրները, որոնց թվում՝ առանձնապես կարևորվել է հայկական վերամշակող ընկերությունների արտադրանքի որակի բարելավումը, ինչը թույլ կտա ապահովել տեղական արտադրության մրցունակությունը ԵՏՄ երկրներում: Անդրադառնալով հանրապետությունում վերջին տարիներին անասնագլխաքանակի աճին և դրանից բխող մսամթերքի արտադրության ծավալների ավելացմանը՝ նախարարը ներկաների ուշադրությունը հրավիրել է նաև տեղական մսի իրացման, ինչպես նաև՝ տեղական մսամթերքի արտահանման խնդրի կարևորությանը:

Քննարկմանը հաստատվել է, որ այս տարի ևս վերամշակող կազմակերպությունները պատրաստ կլինեն մթերել գյուղացիներից ամբողջ արտադրանքը:

Ծովագյուղում գրեթե չկան անմշակ հողատարածքներ Էջ 4

Համայնքը դեռ շատ անելիքներ ունի Էջ 6

Մասնագետի խորհուրդը Էջ 7

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Վարչապետը դրական է գնահատել նախապատրաստական աշխատանքները

1

իսկ տեղում արտադրում 9 հազար 400 տոննա: Կարելի է ներմուծել քիչ և արտադրել շատ: Այդ նպատակով, կառավարությունը պատրաստակամ է աջակցել ներքին արտադրողին»,- նշել է վարչապետը:

Այնուհետև Հովիկ Աբրահամյանն Արմավիրի մարզպետարանում հանդիպել է մարզի համայնքների ղեկավարներին և հողօգտագործողներին: ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը և Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը ներկայացրել են գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստական ընթացքն ու կատարված միջոցառումները:

Գյուղատնտեսության նախարարը նշել է, որ պետական օժանդակության բոլոր ծրագրերը լինելու են շարունակական: Կառավարությունը գյուղացիական տնտեսություններին կտրամադրի ներկրված բարձրորակ հացահատիկային մշակաբույսերի սերմացու, մատչելի գնով պարարտանյութ և դիզելային վառելիք: Նախարարը շեշտել է, որ ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, այսուհետ գյուղացիական վարկերը, չորս տոկոսի փոխարեն, սուբսիդավորվելու են 6 տոկոսով, իսկ վարկերը կտրամադրվեն ապրիլի մեկից: Միաժամանակ, նախարարը նշել է, որ գարնան գյուղատնտեսական աշխատանքները լավագույնս կազմակերպելու համար, համապատասխան միջոցառումներ են իրականացվել նաև ոռոգման համակարգում: Վարչապետի հանձնարարությամբ վերանորոգվել են նաև մի շարք խորքային հորեր: Սերգո Կարապետյանի խոսքով՝ համապատասխան քայլեր են իրականացվում նաև բերքի մթերման, իրացման և վերամշակման գործընթացը համակարգված և կազմակերպված կերպով իրականացնելու ուղղությամբ: Միաժամանակ, նախարարը նշել է, որ կառավարությունը, ծագող խնդիրներին շուտափույթ լուծում տալու համար, լինելու է գյուղացիների կողքին: Այդ նպատակով նախարարությունում ստեղծվել է նաև թեժ գիծ:

Արմավիրի մարզպետը նշել է, որ մարզում հաջողությամբ սկսվել են գյուղատնտեսական աշխատանքները: Ընթացի մեջ է կառավարության տրամադրած սերմացուն, պարարտանյութը և դիզվառելիքը գյուղացիներին հատկացնելու գործընթացը: Մարզպետն ընդգծել է, որ ստեղծվել են բոլոր պայմանները՝ գարնանացանը լավագույնս կազմակերպելու համար: Համապատասխան աշխատանքներ են տարվում նաև գյուղմթերքի արտահանման ծավալներն ավելացնելու ուղղությամբ:

Վարչապետը դրական է գնահատել ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից գարնանացանի կազմակերպման ուղղությամբ կատարված նախապատրաստական աշխատանքները: Միաժամանակ, կառավարության ղեկավարը կոչ է արել հողօգտագործողներին՝ լոլիկի արտադրությունը հասցնել առավելագույնի, քանի որ այն ունի մեծ պահանջարկ: Վարչապետը նշել է, որ տարբեր գործիքակազմերով կառավարությունը պատրաստ է օժանդակել և՛ լոլիկ արտադրողներին, և՛ այն մթերող կազմակերպություններին: Հովիկ Աբրահամյանն արմավիրցիներին տեղեկացրել է նաև, որ Արմավիր-Երասխավան ավտոճանապարհի ասֆալտապատման աշխատանքները կսկսվեն առաջիկայում:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև Արմավիրի մարզի համայնքներում ճանապարհաշինությանը, գազամատակարարմանը, ջրամատակարարմանը, ենթակառուցվածքների զարգացմանը վերաբերող մի շարք հարցեր:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Համատեղ աշխատանք ոլորտում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հանդիպել է կաթ վերամշակող ընկերությունների ներկայացուցիչների հետ՝ ոլորտի ընթացիկ խնդիրների քննարկման նպատակով: «Վերամշակող ճյուղը մեր երկրի գյուղատնտեսության ոլորտի կարևորագույն ճյուղերից մեկն է, սակայն այստեղ առկա են խնդիրներ, որոնք միասնական լուծում են պահանջում»,– նշել է նախարարը:

Այս կապակցությամբ նախարարը հորդորել է կաթնամթերք արտադրող ընկերություններին առավել համակարգված գործել՝ սերտորեն համագործակցելով միմյանց և ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ: Գոհունակությամբ նշելով, որ վերջին տարիներին հանրապետությունում նկատվում է անասնագլխաքանակի աճ և դրանից բխող կաթի արտադրության ծավալների ավելացում՝ նախարարն ընդգծել է, որ այդ պայմաններում անհրաժեշտ է մեծացնել կաթի մթերման ծավալները: Միաժամանակ նախարարն առանձնահատուկ շեշտել է, որ, ըստ նախնական պայմանավորվածության, կաթի մթերման գինը չպետք է նվազի:Նախարարը խորհուրդ է տվել ընկերություններին՝ ավելացնել պանրի արտադրության և արտահանման ծավալները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ արտադրատեսակի պահանջարկը մեծ է ՌԴ-ում:Նախարարը նաև տեղեկացրել է, որ իր հանձնարարությամբ տարեսկզբից փոխնախարար Ռոբերտ Մակարյանն այցելություններ է կատարում մարզեր՝ կաթի մթերման աշխատանքներին տեղում հետևելու և ընթացիկ խնդիրներին ծանոթանալու նպատակով:

Խորհրդակցության ընթացքում նախարարը պատրաստակամություն է հայտնել աջակցություն ցուցաբերել ընկերություններին՝ կաթի մթերման ընթացքում ծագող խնդիրների լուծման հարցում:

ՅԱՎԱԿՑԱԿԱՆ

Ցավով տեղեկացա պետական և քաղաքական գործիչ, ՀՀ գյուղատնտեսության նախկին նախարար Դավիթ Զադոյանի անժամանակ մահվան մասին: Իր բազմամյա աշխատանքային գործունեության ընթացքում, ստանձնելով պետական բարձր պաշտոններ՝ Դավիթ Զադոյանը միշտ արժանապատվորեն և առանձնակի նվիրումով է կրել իրեն վստահված պատասխանատվության բեռը՝ արժանանալով համընդհանուր երախտագիտության և բարձր գնահատանքի:

Անգնահատելի է Արցախյան գոյամարտում և Հայաստանի նորագույն պատմության կերտման դժվարին տարիներին նրա ունեցած անձնական ներդրումն ու դերակատարումը: Ազնիվ, շիտակ և պատվախնդիր անձնավորություն, ով անջնջելի հետք է թողել սերնդակիցների և բոլոր նրանց հուշերում, ում վիճակվել էր նրա հետ ճանապարհ անցնել:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության ողջ աշխատակազմի և անձամբ իմ անունից ցավակցում եմ Դավիթ Զադոյանի ընտանիքի անդամներին, մերձավորներին, գործընկերներին և վշտի այս ծանր պահին հայտնում իմ զորակցությունը:

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյան

Դավիթ Մնացականի Զադոյան

Դավիթ Զադոյանը ծնվել է 1949թ. հունվարի 12-ին, Արարատի շրջանի Արարատ գյուղում: 1975 թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը՝ էլեկտրոնիկայի ինժեների որակավորմամբ: Աշխատել է ԵրՊԻ ռադիոէլեկտրոնիկայի ֆակուլտետի ՀԼԿԵՄ կոմիտեի քարտուղար, 1979 թ.-ին՝ կիբեռնետիկայի ֆակուլտետի կիսահաղորդիչների ամբիոնի լաբորատորիայի վարիչ, միաժամանակ կատարել է դասախոսական աշխատանք: 1981-1987թթ. եղել է Արարատի ինդուստրիալ-տեխնոլոգիական տեխնիկումի տնօրենի տեղակալ:

Այնուհետև 1987-1991թթ. աշխատել է որպես «Արարատարդշին» տրեստի կոմբինատի տնօրեն, ապա՝ տրեստի կառավարչի տեղակալ: 1991-1993 թթ. եղել է Արարատի շրջխորհրդի նախագահ, իսկ 1993-1995 թթ. աշխատել է ՀՀ պարենի և մթերումների նախարար: 1996-1998 թթ. զբաղեցրել է Արարատի մարզպետի, 1998-1999 թթ. ՀՀ տարածքային կառավարման նախարարի և 1999-2000 թթ. ՀՀ Էներգետիկայի նախարարի պաշտոնները: 2000-2002 թթ. աշխատել է ՀՀ արտադրական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար, իսկ 2002-2003 թթ.՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար:

Ամուսնացած էր, ուներ երկու որդի:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑ

Կարևորվում է կոոպերատիվների դերը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այց է կատարել Արագածոտնի մարզ: Այցի սկզբում նախարարը մասնակցել է Ապարան համայնքի արոտօգտագործողների սպառողական գյուղատնտեսական կոոպերատիվի հիմնադիր ժողովին, որի կազմում ընդգրկված են ավելի քան 150 ֆերմերային տնտեսություններ: Ժողովին մասնակցել են նաև Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանը, Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրեն Գագիկ Խաչատրյանը, կոոպերատիվի անդամներ, ֆերմերներ:

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի» (CARMAC) շնորհիվ, կոոպերատիվների ստեղծման գործընթացի խթանումը նպատակ ունի նպաստել փոքր գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը, ինչպես նաև արտադրողականության և արտահանման ծավալների ավելացմանը, որի դրական արդյունքներն արդեն իսկ տեսանելի են», – նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Նրա խոսքով՝ ծրագրի երկրորդ փուլի համար Արագածոտնի մարզում այս պահին շուրջ 10 համայնքներ նախնական ընտրություն են անցել, գործընթացը մեկնարկել է, և ծրագրի նկատմամբ մարզի բնակիչների հետաքրքվածությունն ակներև է:

Ներկայացնելով ծրագրի արդյունքները՝ նախարարը գոհունակությամբ նշել է, որ նախատեսված 55 համայնքների փոխարեն, հանրապետության վեց մարզերի ավելի քան 90 համայնքներում հիմնադրվել են արոտօգտագործողների կոոպերատիվներ, իսկ համայնքների գերակշիռ մասում ավարտվել են արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները:

Անդրադառնալով Արագածոտնի մարզում ծրագրի իրականացման ընթացքին՝ նախարարը տեղեկացրել է, որ մարզի 12 համայնքներում ստեղծվել են արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներ, որոնց տրամադրվել է 89 միավոր գյուղտեխնիկա: Ծրագիրը ֆինանսավորում է ձեռքբերվող գյուղտեխնիկայի արժեքի 80%-ը, իսկ 20% տրամադրում է կոոպերատիվը:

Խոսելով «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի» (CARMAC 2) մասին՝ նախարարը նշել է, որ այս ծրագրի թիրախային հիմնական նպատակներն են՝ գյուղատնտեսական կոոպերատիվների հզորացումն ու ագրոպարենային արժեշղթաներում արտադրվող և շուկայահանվող արտադրանքի ծավալների աճը: Նախարարը հավելել է նաև, որ ծրագրի երկրորդ փուլը կիրականացվի հանրապետության թվով 8 մարզում. ընդգրկվել են նաև Կոտայքի և Վայոց ձորի մարզերը:

Այնուհետև նախարարն այցելել է Ապարանի պանրի գործարան, ծանոթացել աշխատանքային պայմաններին: Գործարանի տնօրեն Տիգրան Հովհաննիսյանը հայտնել է նախարարին, որ ընկերության արտադրական հզորությունը կազմում է օրական 2 տոննա պանիր: Համոզմունք հայտնելով, որ կոոպերատիվների ստեղծումը կնպաստի կաթի արտադրության ծավալների ավելացմանն ու մթերվող կաթի որակի բարելավմանը՝ ընկերության տնօրենն իր կողմից պատրաստակամություն է հայտնել, անհրաժեշտության դեպքում, ավելացնել մթերման ծավալները:

Ագրոլրատու
Մարտ 25- ապրիլ 9, 2015 թ.
թիվ 7 (2062)

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԻՍՏ

Արտադրության ծավալների ավելացում

Օրերս տեղի է ունեցել ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից կոլեգիայի նիստ, որը վարում էր ՀՀ գյուղատնտեսության նախարար, կոլեգիայի նախագահ Սերգո Կարապետյանը:

Նիստին հրավիրված էին նաև Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ղեկավար Արմեն Հայրապետյանը, Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Խաչատրյանը, նախարարության համակարգի գիտական կենտրոնների ղեկավարներ, այլ պաշտոնյաներ, ինչպես նաև սերմարտադրող ֆերմերներ՝ Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզերից:

Բացելով նիստը՝ կոլեգիայի նախագահ Սերգո Կարապետյանը նշեց, որ սկսած 2010 թվականից, նախարարության նախաձեռնությամբ, սերմնաբուծության և սերմնարտադրության ոլորտում պետության և մասնավոր հատվածի համագործակցությամբ, իրականացվել են ծրագրեր, որոնց արդյունքում (4-5 տարիների ընթացքում) ակնհայտ ձեռքբերումներ են գրանցվել՝ նպաստելով հանրապետությունում հացահատիկային և կերային մշակաբույսերի ցանքատարածությունների, արտադրության ծավալների ավելացմանը և ինքնաբավության մակարդակի բարձրացմանը:

Կոլեգիայի օրակարգային հարցը վերաբերում էր ՀՀ-ում սերմնաբուծության և սերմարտադրության ծրագրերի իրականացման ընթացքին, արդյունքներին և առաջիկա խնդիրներին, որոնց վերաբերյալ զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Սամվել Գալստյանը:

Իր զեկույցում հանգամանորեն անդրադառնալով այդ ծրագրերի արդյունքներին՝ Սամվել Գալստյանը մասնավորապես նշել է, որ ցորենի ինքնաբավության մակարդակը հանրապետությունում 32 %-ից ավելացել է՝ 2014 թվականին կազմելով շուրջ 51 %, իսկ ներկրված բարձր վերարտադրության սերմացուների բազմացմամբ, աշնանացան ցորենի սերմացուի պահանջարկի 70-75 %-ը սորտաթարմացվել է:

Զեկույցի համաձայն՝ 2010 թվականին հացահատիկ և հատիկաընդեղեն մշակաբույսերի ցանքատարածություններն ավելացել են 28.1 հազար հեկտարով և կազմել 185.7 հազար հա, իսկ համախառն բերքն ավելացել է 80.9 %-ով՝ կազմելով 590.5 հազար տոննա: Մասնավորապես՝ 2010 թվականին ցորենի ընդհանուր ցանքատարածությունները կազմել են 87.6 հազար հա, համախառն բերքը՝ 183.5 հազար տոննա, իսկ 2014 թվականին ընդհանուր ցանքատարածությունները կազմել են 106.3 հազար հա, ցորենի համախառն բերքն ավելացել է 84.3 %-ով՝ կազմելով 338.2 հազար տոննա: Գարու ընդհանուր ցանքատարածությունները 2010 թվականին կազմել են՝ 61.2 հազար հա, համախառն բերքը՝ 118.6 հազար տոննա, իսկ 2014 թվականին ընդհանուր ցանքատարածությունները կազմել են 67.6 հազար հա, գարու համախառն բերքը՝ կազմել է 200.5 հազար տոննա՝ ավելանալով 67.6 %-ով:

Հողօգտագործողներին հատկացվող պետական աջակցության ծրագրերի (մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի, դիզելային վառելանյութի տրամադրում, սերմացուների գների և վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում) իրականացման արդյունքում, 2014 թվականին բուսաբուծության ընդհանուր ցանքատարածությունները, 2010 թվականի համեմատությամբ, ավելացել են 49.2 հազար հեկտարով կամ շուրջ 17 %-ով: 2015 թվականի կանխատեսումներով՝ ցանքատարածությունները կավելանան 14.5-15.5 հազար հեկտարով:

Լսելով և քննարկելով զեկույցը՝ կոլեգիան դրական է գնահատել իրականացված ծրագիրը և առաջարկել, որպեսզի այն նույնպես շարունակվի:

Կոլեգիայի նախագահ Սերգո Կարապետյանը հանձնարարել է պատասխանատուներին՝ իրականացնել համապատասխան աշխատանքներ՝ ծրագրի շարունակականության ապահովման ուղղությամբ՝ հաշվի առնելով առանձին հարցերի վերաբերյալ կոլեգիայի անդամների հնչեցրած առաջարկությունները:

ՀԱՐԾԱԶՐՈՒՅՑ

ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ՝ ՄԵԿ ՕՊԵՐԱՏՈՐ, ՄԵԿ ԿԱՌԱՎԱՐԻՉ

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի պայմանագրային կառավարիչ, «ՍԱՈՒՂ» Ֆրանսիական ընկերությունը 2014 թ. նոյեմբերի 20-ին նշեց Հայաստանում ծավալած իր գործունեության տասնամյակը: Այդ առիթով Հայաստան էին ժամանել ընկերության նախագահ Ժերոմ Լե Կոնտը, միջազգային տնօրեն Միշել Ֆուրրեն և այլ աշխատակիցներ: Հյուրերը հանդիպումներ են ունեցել ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ:

Ընկերությունը աշխատանքներ է իրականացնում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման ուղղությամբ՝ ավելացնելով ջրամատակարարման փևողությունը, ապահովելով ջրի համային և որակական հատկանիշները: Այս աշխատանքները ղեկավարում է «Հայջրմուղկոյուղի» ընկերության գլխավոր տնօրեն, պայմանագրի կառավարիչ Պատրիկ Լորենը: Ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում ձեռքբերված 45 տարվա աշխատանքային փորձն ու գիտելիքներն այսօր փորձառու մասնագետը ներդնում է ՀՀ ջրային ոլորտի առաջընթացի գործում: Ընկերության ձեռքբերումների, ներդրումների, առաջիկա ծրագրերի մասին զրույցը՝ «Հայջրմուղկոյուղի» ընկերության գլխավոր տնօրեն Պատրիկ Լորենի հետ:

- Պարոն Լորեն, ընկերության սպասարկման տարածքում հանրապետության ո՞ր քաղաքներն ու համայնքներն են ընդգրկված:

- 2004 թ. նոյեմբերից, երբ «ՍԱՈՒՂ»-ը սկսեց իր գործունեությունը ծավալել, մինչև 2013 թվականը սպասարկման տարածքն ընդգրկում էր հանրապետության 37 քաղաքներ և շուրջ 280 գյուղական համայնքներ: 2014 թ. հունվարից ընկերությունն իր կառավարման ներքո վերցրեց նաև՝ «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲ ընկերությունները:

- Ջրամատակարարման ծառայությունների բարելավման հետ կապված ի՞նչ աշխատանքներ են իրականացվում:

- 2004 թ. մինչ այսօր զարգացման կարևոր ցուցանիշներից է համարվում ջրամատակարարման տևողության ավելացումը՝ 6 ժամ միջինից հասցնելով է մինչև 17 – 18 ժամի, մի շարք համայնքներում էլ արդեն ունենք շուրջօրյա ջրամատակարարում: Բացվել է օպերատիվ դիսպետչերական կենտրոն, որտեղ ամեն օր առցանց եղանակով, ուսումնասիրվում են լոգերներով հագեցած, գլխամասային կառուցվածքներով արտադրված ջրաքանակները, պոմպային ագրեգատների աշխատանքային ժամերն ու պարամետրերը: Ջրատարների օդային տեսանկարահանումների նպատակով ձեռք ենք բերել նաև անօդաչու թռչող սարքավորում:

- Առաջիկայում ի՞նչ ծրագրեր կան, որոնք պետք է իրականացնել:

- Նախատեսում ենք, մինչև 2020 թ. ամենուրեք 24 ժամյա ջրամատակարարում ապահովել: Մի շարք ծրագրեր ենք իրականացնում, որպեսզի այսօր չլինեն բաժանորդներ, ովքեր օրական 4 ժամից քիչ ջրամատակարարում ունենան: Նախորդ տարի կատարվել են շուրջ 30 միլիոն դոլարի ներդրման աշխատանքներ: Հարկավոր է մեկ միլիարդ, անհրաժեշտ է գումար մեզ ՝ պոմպակայանների, ջրագծերի, մաքրման կայաններում աշխատանքներն իրականացնելու համար:

- Համագործակցու՞մ եք Հայաստանի Հանրապետության կառավարության հետ:

- Մշտապես ունեցել ենք կառավարության բոլոր կառույցների աջակցությունը, որովհետև առանց աջակցության, որպես արտասահմանյան ընկերություն, հնարավոր չէ. քաղաքապետարանները, մարզպետարանները, բոլոր համայնքների ղեկավարներն աջակցում են ծրագրերին: Գումարները փոխանցում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, համաձայն մի շարք դոնոր ընկերությունների հետ կնքված պայմանագրերի՝ «Համաշխարհային բանկի» /WB/, «Ասիական զարգացման բանկի» /ADB/, «Եվրոպական ներդրումային բանկի» /EIB/, «Վերակառուցման և զարգացման եվրոպական ներդրումային բանկի» /EBRD/, Գերմանական բանկի/ Kfw:

- Ձեր ղեկավարած ընկերությունը մեծ տեղ է հատկացնում աշխատակիցների երեխաների ամառային հանգստի, մարզական միջոցառումների կազմակերմանը, օգնում է նաև մանկատներին. ինչպե՞ս է իրականացվում այդ ամենը:

- Մենք իրականացնում ենք մեծ կորպորատիվ սոցիալական ծրագրեր: Այո, օգնում ենք մանկատների երեխաներին, մեր աշխատակիցների երեխաներն ամռանը հանգստանում են ճամբարներում, մի քանի մարզական ծրագրեր ենք իրականացնում, հովանավորում ենք հանրապետության մի քանի լավագույն մարզիկների տարբեր մարզաձևերից՝ դահուկավազք, գոլֆ, հեծանվային մարզաձև: Մեր գործունեությունը չպետք է սահմանափակվի միայն հիմնական նպատակով, այլ նաև պետք է ունենա սոցիալական պատասխանատվություն հանրապետությունում: Մեր աշխատակիցների համար կազմակերպում ենք ֆուտբոլի մրցաշարեր և շախմատի առաջնություն: Մի շարք ձեռքբերումներ ենք ունեցել, իհարկե, հեռու ենք դեռ մեծ նպատակից, օգտագործում ենք նորագույն տեխնոլոգիաներ: Տարածաշրջանում ամենաժամանակակից ընկերություններից մեկն ենք, իհարկե, ամեն ինչ ավելի հստակ կերևա 2016թ. հունիսի 1-ին, երբ ամբողջ երկրի տարածքում կլինի մեկ օպերատոր, մեկ մասնավոր կառավարիչ: «ՍԱՈՒՂ»-ը կմասնակցի մրցույթին՝ հուսալով, որ հաղթող կճանաչվի: Հավելեմ նաև, որ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հատուկ նախագիծը երեխաների համար հրատարակել է մանկական գրքույկ՝ «Նարեկի ու Նարեի արկածները H_2O մոլորակում», որը երեխաներին սովորեցնում է, թե ինչպես է խնայողաբար օգտագործել խմելու ջուրը:

Մանվել Կիրակոսյան

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ԾՈՎԱԳՅՈՒՂՈՒՄ ԳՐԵԹԵ ՉԿԱՆ ԱՆՄՇԱԿ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ

Գյուղատնտեսության զարգացմանն ուղղված կարևոր քայլերից մեկը՝ կոոպերատիվների հիմնումն է: Այն երբեմն նույնականացվում է նախկին սովխոզների հետ, սակայն այս դեպքում՝ մենք գործ ունենք ընդհանուր գաղափարների շուրջ համախմբված միավորների հետ: Այդպես համախմբվեցին ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ համայնքի արոտօգտագործողներն ու հողօգտագործողները:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ« («ԾԻԳ») ՊՀ-ի կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում, գյուղի հեռագնա արոտավայրերում տեղադրվել է 2 խմոց: Իսկ ստացված գյուղատնտեսական տեխնիկան՝ 3 հատ МТЗ, 1 հատ Т 150 մակնիշի տրակտոր, 2 շարքացան և այլն, հնարավորություն է ընձեռել վարել և ցանել 20 տարուց ավելի անմշակ մնացած հողատարածքները: Ծրագրի շնորհիվ, ձեռք են բերել նաև ձեռքի 4 խոտհնձիչ, նույնքան հակավորող սարք, 1 УАЗ մակնիշի ավտոմեքենա: Առաջիկայում կհատկացվի ևս մեկ МТЗ մակնիշի տրակտոր: Կամավորության սկզբունքով հիմնված «Ծովագյուղ համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի մեջ ներգրավվել է 350 անդամ: «Գյուղում փոքրաթիվ է այն ընտանիքների թիվը, որոնք դեռևս չեն անդամակցում կոոպերատիվին: Ծովագյուղում վարը, ցանքը, հունձը և մյուս աշխատանքները միասին են կատարում: Արդյունքն էլ՝ շոշափելի է»,-ասում է «ԾԻԳ» ՊՀ-ի մարզային աջակցության թիմի համակարգող Խորեն Բաղալյանը: Ծրագիրը մեկնարկել է 2013թ.-ից: «Գյուղի համար մեծ նշանակություն ուներ աջակցության այս ծրագրի իրականացումը, քանի որ չունեինք գյուղատնտեսական տեխնիկա, իսկ մաշված հին տրակտորները և այլ գյուղգործիքները գրեթե հնարավոր չէր շահագործել: Այդ պատճառով համայնքի հողատարածքների գերակշռող մասը չէր մշակվում: Ծրագրի գործնական քայլերն ու շոշափելի արդյունքները տեսնելով՝ գյուղացու մոտ վերականգնվել է հավատն ու վստահությունը: Հիմա նրանք արդեն լավ են պատկերացնում, թե ի՞նչ է իրենից ներկայացնում կոոպերացիան, ի՞նչ առավելություններ ունի, ի՞նչու համախմբվել և այլն»,- նշում է գյուղապետ Վահրամ Գևորգյանը:

Գյուղն ունի զարգացած անասնաբուծություն, արդեն առկա են 3500 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, որից 1620-ը՝ կովեր են: Հեռագնա արոտավայրերում պատրաստվելու են ամառային կացարաններ, և կենդանիները ամռան ամիսներին կարող են մնալ յայլաներում: Ի դեպ, անասնատերերի վկայությամբ, արոտավայրերի ջրարբիացման ծրագրի իրականացումից հետո, զգալիորեն բարձրացել է կենդանիների կաթնատվությունը, իսկ հերթափոխային արածեցման արդյունքում՝ նաև յուղայնությունը: Պատճառը՝ բուսածածկի արդյունավետ օգտագործումն ու արագ վերականգնումն է, ինչի շնորհիվ կենդանիները կերակրվում են լիարժեքորեն:

«Աշխատանքի և ստացված արդյունքի շնորհիվ է, որ վստահություն է առաջանում: Սկզբնական շրջանում գյուղացու մոտ տարակուսանք կար կոոպերատիվի նկատմամբ: Սակայն, ժամանակի ընթացքում, ամեն ինչ հարթվեց: Աշխատում ենք համատեղ և տարեցտարի դրական փոփոխությունը զգալի է: Կարծում եմ, որ Ծովագյուղի փորձը կարող է ուսանելի լինել նաև հանրապետության այլ համայնքների համար»,-իր խոսքն ամփոփում է կոոպերատիվի նախագահ Վարազդատ Խուդավերդյանը:

Կոոպերատիվի բոլոր անդամների համար ապահովված են հավասար պայմաններ: Առաջիկայում ծրագրին կներկայացնեն կոմբայնի ձեռքբերման հայտ: Գյուղապետի կարծիքով՝ կա նաև վերամշակման արտադրամասերի ստեղծման անհրաժեշտություն: Ի դեպ, նրա տեղեկացմամբ, ծրագրի իրականացումից հետո, գյուղում շեշտակիորեն կրճատվել է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Շատ երիտասարդներ դիմել են գյուղապետարան՝ կոոպերատիվի աշխատանքներում ներգրավվելու նպատակով: «Նրանց մեջ կան գյուղատնտեսներ, բույսերի պաշտպաններ, անասնաբույծներ, անասնաբույժներ և այլ մասնագետներ, ովքեր իրենց պատրաստակամությունն են հայտնել՝ մնալ գյուղում, աշխատել և մասնակից լինել հայրենի գյուղի շենացմանն ու բարգավաճմանը»,-ասում է գյուղապետը:

Կոոպերատիվի անդամների համատեղ կայացրած որոշումներից մեկն էլ՝ հողերի խոշորացումն է, քանի որ դժվար է մշակել կտրտված և տարբեր հատվածներում բաշխված հողատարածքները:

Ծովագյուղ տանող ճանապարհի աջ և ձախ եզերքներով ձգվում են վարած հողատարածքները: Սևահողի քարացած բեկորները փշուր-փշուր են եղել, հարթեցված հողը սերմի է սպասում: Սիրտդ բերկրանքով է լցվում…

Նելլի Սահակյան

ԾՐԱԳԻՐ

ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՓԱԹԵԹ՝ ՉՈՐՍ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեկնարկում է «Նորարարական գյուղական զբոսաշրջության խթանում» ծրագրի նոր փաթեթը

ՀՀ-ում ԵՄ պատվիրակության և Հեյֆեր Հայաստանի մասնակցությամբ տեղի ունեցավ «Նորարարական գյուղական զբոսաշրջության խթանում» ծրագրի շրջանակներում մշակված «Տարածաշրջանային այցելուի միասնական փաթեթ»-ի («ՏԱՄ» փաթեթ) շնորհանդեսը:

Ինչպես նշեց Հեյֆեր Հայաստանի տնօրեն տիկին Անահիտ Ղազանչյանը, «Նորարարական գյուղական զբոսաշրջության խթանում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Այն իրականացնում է Հեյֆեր Հայաստանը՝ որպես առաջատար գործընկեր, Վրաստանի (Հեյֆեր Վրաստան), Թուրքիայի (Գյումուշանի ազգային կրթական վարչություն) և Բուլղարիայի (Վառնայի տնտեսական զարգացման գործակալություն) գործընկերների համագործակցությամբ:

Ծրագրի շրջանակներում մշակվել է «ՏԱՄ» փաթեթ, որն ընդգրկում է տուրիստական շուրջ տասը երթուղի: Հայաստանի, Վրաստանի, Թուրքիայի և Բուլղարիայի զբոսաշրջային գործակալությունները հնարավորություն կունենան վաճառելու «ՏԱՄ» փաթեթը, և զբոսաշրջիկները կարող են այցելել այս չորս երկրներ՝ մեկ միասնական փաթեթով: Արդյունքում՝ ծրագիրը կխթանի զբոսաշրջիկների ներհոսքը դեպի տարածաշրջան և իր ներդրումը կունենա ներերկրային և ներտարածաշրջանային պետական իշխանավորների միջև աննախադեպ համագործակցության հաստատման հարցում: Ծրագրի շրջանակներում այս «պրոդուկտի» ստեղծման նպատակն է՝ տարածաշրջանային մակարդակով գյուղական զբոսաշրջության ոլորտում երկարատև արդյունքների ձեռքբերումը:

Միջոցառմանը մասնակցում էին հյուրեր՝ Բուլղարիայից, Վրաստանից և Թուրքիայից, ՀՀ նախարարությունների գործընկեր երկրների կառավարության, արտասահմանյան առաքելությունների և դեսպանատների, միջազգային և տեղական գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ: Միջոցառումն ուղեկցվեց ժողովրդական երաժշտության, ինչպես նաև՝ ազգային և ավանդական արտադրանքի ու արվեստի ցուցադրությամբ:

Այնուհետև ներկաներին ողջունեցին ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար Տրայան Հրիսթեան և ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Արմեն Հարությունյանը: Ըստ փոխնախարարի՝ համագործակցության միջոցով է պայմանավորված ծրագրի իրականացումն ու հետագա զարգացումը: Արդյունքում՝ կունենանք զարգացած գյուղական տուրիզմ և համայնքների տնտեսական զարգացում:

Շնորհանդեսի ընթացքում ելույթ են ունեցել նաև գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ Հայաստանից, Բուլղարիայից, Վրաստանից և Թուրքիայից:

«Նորարարական գյուղական զբոսաշրջության խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրամիության կողմից՝ 473 000 եվրո գումարի չափով, Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի միջոցով: Ըստ Ա. Ղազանչյանի՝ ծրագիրը մեկնարկել էր դեռևս 2013թ. նոյեմբերին և կտևի 18 ամիս: Այն ուղղված է տարածաշրջանային համագործակցության և տնտեսական ու սոցիալական զարգացման նպատակով սևծովյան ավազանի երկրների (Հայաստանի, Բուլղարիայի, Թուրքիայի, Վրաստանի) միջև գործընկերության հաստատմանը: Այս ծրագրի շրջանակներում համատեղ ռեսուրսներով ստեղծվում են գյուղական զբոսաշրջության համակարգեր՝ միասնական, նորարարական և ավանդական զբոսաշրջության զարգացման նախաձեռնությունները խթանելու նպատակով:

Ծրագրի արդյունքում՝ կամրապնդվեն տարածաշրջանային համագործակցությունն ու գործընկերական կապերը՝ ֆիզիկական և մարդկային ռեսուրսների ինտեգրացված օգտագործման և փորձի փոխանակման միջոցով, որի նպատակն է բարելավել զբոսաշրջության ոլորտում մատուցվող ծառայությունները: Այս ամենը կխթանի սևծովյան ավազանի երկրների սոցիալական և տնտեսական զարգացումը:

Լիանա Շախնազարյան

Ագրոլրատու
Մարտ 25- ապրիլ 9, 2015 թ.
թիվ 7 (2062)

ՍԵՄԻՆԱՐ

ԿՈՏԱՅՔԻ ԳԱՄԿ-Ը ԵՎ ԳԱՀԿ-Ը ԱՐՁԱԳԱՆՔԵՑԻՆ ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ԽՆԴՐԱՆՔԻՆ

Հայտնի է, որ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր մարզերում լայն տարածում են ստացել խոշոր և մանր եղջերավոր անասունների արյան մակաբուծային հիվանդությունները (թեյլերիոզ, պիրոպլազմոզ, անապլազմոզ), որոնք կենդանիների մթերատվության, մատղաշների աճի և զարգացման անկման, ինչպես նաև որոշ տնտեսություններում հղի կենդանիների վիժումների և անկումների պատճառ են դառնում: Քանի որ հիվանդության տարածողները արոտավայրային տզերն են, ուստի հիվանդությունը կրում է սեզոնային բնույթ՝ սկսվում է գարնանը և կարող է ձգվել մինչև ուշ աշուն: Սակայն հիվանդությունը կարող է գլուխ բարձրացնել նաև ձմռանը, քանի որ այս հիվանդություններից՝ անապլազմոզի գաղտնի շրջանը 20-80 օր է:

Ելնելով վերոնշյալից և Կոտայքի մարզի գյուղատնտեսության խորհրդատուների ու ֆերմերների պահանջից՝ Կոտայքի մարզ էին այցելել ՀՀ ԳՆ «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն»-ի փոխտնօրեն Ա. Հայրապետյանը և ՀԱԱՀ-ի Համաճարակաբանության և մակաբուծաբանության ամբիոնի անասնաբուժական գիտությունների թեկնածու Վ. Գրիգորյանը: Նրանք այցելել են Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանի Զառ և Սևաբերդ համայնքներ, անցկացրել սեմինարներ՝ նշված թեմաներով: Սեմինարներին ներկա էին Կոտայքի ԳԱՄԿ-ի տնօրեն Ա. Խալաթյանը, գյուղատնտեսության հարցերի մասնագետ Գ. Ավետիսյանը, գլխավոր խորհրդատու Հ. Վարդանյանը, շահագրգիռ ֆերմերներ: Վ. Գրիգորյանը ներկայացրեց արյան մակաբուծային հիվանդությունների, ինչպես նաև այլ ինվազիոն հիվանդությունների, դրանց տարածվածության ու տարածման, փոխանցման, հարուցիչների բազմացման, դրանց կանխարգելման և այլ խնդիրների մասին:

Ըստ նրա՝ խոշոր և մանր եղջերավոր անասունների արյան մակաբուծային հիվանդությունները խոչընդոտում են ճյուղի զարգացմանը: Այդ հիվանդություններից առաջացած կորուստները բաժանվում են երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի կորուստներն առաջ են գալիս կենդանիների մթերատվության նվազումից և երբեմն՝ դրանց անկումներից, իսկ անուղղակի կորուստները՝ կանխարգելիչ միջոցառումներից, տզերի դեմ պայքարից և անասնապահության վարման սահմանափակումից:

Կենդանիների արյան մակաբուծային հիվանդությունով վարակվածության բարձր մակարդակը վկայում է այն մասին, որ գյուղացիական տնտեսություններում գրեթե չեն իրականացվում կամ թերի են իրականացվում տզերի հարձակումներից կենդանիների պաշտպանվելու միջոցառումները, նաև չեն կատարվում այս հիվանդության նկատմամբ այլ կանխարգելիչ միջոցառումներ: Սա վկայում է նաև այն մասին, որ արոտավայրերը վարակված են արոտավայրային տզերով, որը կարող է պատճառ դառնալ կենդանիների՝ ինչպես այս հիվանդությամբ վարակվելուն, այնպես էլ ինվազիոն և ինֆեկցիոն մի շարք հիվանդությունների հարուցիչների փոխանցմանը:

Վերջում սեմինարների մասնակիցներին բաժանվեցին՝ ինչպես օրակարգում նշված, այնպես էլ գյուղատնտեսական այլ թեմաներով խորհրդատվական թերթիկներ:

Նարինե Անդրեասյան
Կոտայքի ԳԱՄԿ

ԳՈՐԾԱՐԱՐ ԿԱՆԱՅՔ

«ԻՄԱՍՏՈՒՆ ԿԻՆԸ ԿԱՌՈՒՑՈՒՄ Է ԻՐ ՏՈՒՆԸ»

Դժվար է լինել կին և գործարար: Այդ դեպքում, ընտանեկան հոգսերից բացի, ուսերիդ մի բեռ էլ է ավելանում, որը պիտի տանես հոժարակամ: Լինել գործարար, նշանակում է՝ լինել գործունյա, այլ կերպ ասած՝ հաստատուն ու վճռական: Եվ այդ ամենով հանդերձ՝ մնալ քնքուշ ու կանացի: Այդպիսին է Գալինա Բաբայանը, ում հետ շփվելիս, անմիջապես նշմարում ես առաքինություն ու համեստություն, որոնք առավել գեղեցկացնում են տիկին Գալինային:

Մասնագիտությամբ կաթի և կաթնամթերքի ինժեներ-տեխնոլոգ է: Երկար տարիներ աշխատել է Կալինինոյի (այժմ՝ Տաշիր) գլխավորող պանրագործարանի վարպետների մասնագիտացված դպրոցում՝ որպես ուսուցիչ, այնուհետև, նույն հաստատությունում՝ ուսումնական մասի վարիչ: Բոլոր ժամանակներում էլ Կալինինոն հանրահայտ է եղել որակյալ պանրագործ-մասնագետներով: Մեծ է տիկին Գալինայի ներդրումը՝ ոլորտի լավագույն մասնագետների պատրաստման գործընթացում:

Մանկավարժական գործունեությանը հաջորդեց գործարար ծրագրի իրականացումը: Ամուսնու, Ռուբեն Հարությունյանի հետ համատեղ, 1996թ.-ին հիմնադրեցին «Սարգիս» ընտանեկան ձեռնարկությունը, որը, երեք տարի անց, վերանվանվեց «Դուստր Մելանյա» ՍՊԸ: Ձեռնարկությունը զբաղվում է ավանդական և յուրօրինակ պանրատեսակների արտադրությամբ: Սկսած 2001թ.-ից, իրականացվում է կանոնավոր արտահանում ԱՄՆ և ՌԴ: Տիկին Գալինան ստանձնել է լաբորատորիայի վարիչի պարտականությունը: Կատարված աշխատանքների իրական գնահատականը տալու համար բավական է նշել, որ ընկերությունում ներդրված է սննդի անվտանգության HACCP համակարգ՝ սերտիֆիկացված է ISO-22000 սերտիֆիկատով: «Դուստր Մելանյան» այժմ թողարկում է պանիրների և կաթնամթերքի մի քանի տասնյակի հասնող տեսականի:

Ընկերությունը բազմիցս մասնակցել է միջազգային և հանրապետական ցուցահանդեսների ու համտեսների, արժանացել մրցանակների ու բարձր պարգևների: Հաջողությունների ձեռք բերման գործում մեծ է կին գործարարի, ոլորտի լավագույն մասնագետի ներդրումը:

Գալինա Բաբայանի աշխատանքը գնահատվել և արժևորվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից: Գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար վերջերս նա պարգևատրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի շնորհակալագրով: «Իմաստուն կինը կառուցում է իր տունը», - կարդում ենք Աստվածաշնչյան ճշմարտության մեջ: Գալինա Բաբայանի անցած ճանապարհը խոսուն փաստ է այն մասին, որ նա կառուցել է իր տունը, իրո՛ք կառուցել է...

ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իրինա Իսրայելյանն արդեն չորրորդ տարին է, ինչ ՀՀ Լոռու մարզում գործարկել է հյուրատուն: Մասնակցելով «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» (ՀԵԿԱ) ՀԿ-ի ուսուցողական դասընթացներին և ձեռք բերելով համապատասխան գիտելիքներ՝ Իրինան անմիջապես ձեռնամուխ եղավ կյանքի կոչել գործարար ծրագիրը, որն իրականացվեց ՀԵԿԱ-ի կողմից տրամադրված դրամաշնորհով: Հաջողված ծրագիրն ունեցավ իր շարունակությունը. այժմ Իրինան, դարձյալ ասոցիացիայի աջակցությամբ, ձեռք է բերել վրանային ճամբարի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր պարագաները: Նպատակն՝ ագրոէկոտուրիզմի զարգացումն է, ինչի հնարավորությունը Լոռու մարզում մեծ է: «Գործարար ծրագրերի իրականացման համար պետք է բանիմաց լինել, ընտրած գործն ուսումնասիրել խորությամբ, որպեսզի այն արդյունավետ լինի: Այլ կերպ ասած, ցանկացած գործին պետք է արհեստավարժ մոտեցում ցուցաբերել»,- ասում է Իրինա Իսրայելյանը: Ի դեպ, գործարարը մասնագիտությամբ մանկավարժ է, բայց արդեն, մեծ ջանքերի շնորհիվ, հմտացել է նաև իր նոր աշխատանքում:

Թեհմինե Դալլաքայանը ներկայացնում է ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքը: Մասնագիտացել է արիշտայի արտադրության գծով: Գործարարությունը սկսել է փոքր ծավալներից: «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում, Թեհմինեն արդեն մուտք կգործի գործարար աշխարհ և կընդլայնի արտադրությունը: «Փորձը ցույց տվեց, որ մենք տնային պայմաններում շատ համեղ արտադրանք ենք ստանում, որոշեցինք ստեղծել համապատասխան պայմաններ և ընդլայնել արտադրությունը: Առայժմ աշխատում ենք ես և մայրս, բայց հետագայում՝ արտադրության ընդլայնմանը զուգընթաց, կավելացնենք նաև աշխատատեղերը»,- ասում է երիտասարդ գործարարը: Թեհմինեն նույնպես մասնակցել է ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ ՀԵԿԱ-ի դասընթացներին: «Մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելուց հետո, այժմ իմ բիզնեսը ճիշտ հիմքի վրա է դրված»,- հավելում է Թեհմինեն:

Ի դեպ՝ նրա արտադրած արիշտան մեծ համբավ ունի Դսեղում և հարակից գյուղերում: Իսկ առաջիկայում կնդլայնվի արտադրանքի իրացման աշխարհագրությունը:

Աննա Պողոսյանը Լոռու մարզի Քարինջ գյուղում հիմնել է հացի և խմորեղենի արտադրամաս՝ կանանց համար ապահովելով մի քանի աշխատատեղ: «Գյուղը գտնվում է Ալավերդի քաղաքից բավականին մեծ հեռավորության վրա, և բնակիչներն այնտեղ չեն կարող աշխատել: Իսկ Քարինջում էլ չկան աշխատատեղեր (գյուղում բնակիչների հիմնական զբաղմունքը անասնապահությունն է): Այդ պատճառով որոշեցի հիմնել հացի, լավաշի և խմորեղենի արտադրման փոքր ձեռնարկություն»,-նշում է Աննան, ով նույնպես ՀԵԿԱ-ի անդամ է: Նախատեսել են արտադրանքն առաքել նաև հարակից գյուղեր: «Ցանկալի կլիներ, որպեսզի հանրապետության այլ գյուղերում ևս կանայք փոքրիկ արտադրամասեր հիմնեին: Նրանց խորհուրդ կտայի չխուսափել ռիսկային գործունեություն սկսելուց»,- հավելում է Աննան:

Անուշ Մելքումյանը Լոռու մարզի Ախթալա քաղաքի բնակիչ է: Աշխատանքային հիմնական զբաղվածություն չունենալու պատճառով, երկար տարիներ քաղաքի մի խումբ բնակիչներով անտառից հատապտուղներ են հավաքել և վաճառել՝ այդպիսով հոգալով օրվա ապրուստը: Այժմ որոշել են ՀԵԿԱ-ի տրամադրած դրամաշնորհով, հիմնել պահածոյի արտադրամաս: Այդ նպատակով առայժմ խորացնում են մասնագիտական գիտելիքները: Անուշի կարծիքով՝ այս ձեռնարկումը կլինի մարզի փոքր բիզնեսի հաջողված ծրագրերից մեկը:

Նելլի Սահակյան

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՃՈՂՆԵՐԻ ՈՐՈՇ ՃԻՃՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Որոճողների ճիճվային (հելմինթոզներ) հիվանդություններն այսօր մեծ տարածում ունեն մեր հանրապետությունում և յուրաքանչյուր տարի զգալի վնաս են պատճառում անասնապահությանը: Հետևաբար, որոճողների ճիճվային հիվանդությունները կանխարգելելու նպատակով, ֆերմերներին խորհուրդ է տրվում կատարելու հետևյալ միջոցառումները.

Ճիճվային հիվանդություններից՝ տրեմատոդոզների (ֆասցելյոզներ, դիկրոցելյոզ, պարամֆիստոմատոզներ) նկատմամբ անհրաժեշտ է կատարել.

• Գարնանը, արոտավայր տանելուց մեկ ամիս առաջ, ամբողջ գլխաքանակը ճիճվաթափում են ներկայումս անասնաբուժական դեղատներում առկա՝ ալբեն, բենվետ, բրովադազոլ, հելմիցիդ և այլ դեղամիջոցներով: Ցանկալի է ճիճվաթափության ենթարկել տվյալ տարածքում գտնվող բոլոր կենդանիներին: Գոմաղբն անհրաժեշտ է հավաքել և ենթարկել կենսաջերմային մշակման:

• Արոտային սեզոնում, արոտավայրերը փոխում են 2-2,5 ամիսը մեկ անգամ, իսկ եթե հնարավոր չէ, ապա ողջ արոտային շրջանում՝ գոնե մեկ անգամ:

• Արգելվում է կենդանիներին հանել արոտի՝ գետափնյա, լճափնյա և ճահճոտ վայրերում կամ կերակրել այդ վայրերից հավաքված խոտով:

• Արգելվում է կենդանիներին ջրել անհոսք ջրամբարների ջրով:

• Անհրաժեշտ է արոտավայրերում կտրել թփուտները, հավաքել քարերը և այրել նախորդ տարվա չոր խոտը:

Որոճողների առավել տարածված ցեստոդոզների (մոնիեզիոզներ, թիզանեզիոզ, ավիտելինոզ և այլն) նկատմամբ պայքարելու նպատակով խորհուրդ է տրվում կատարել հետևյալ կանխարգելիչ միջոցառումները.

• Արգելվում է վաղ գարնանը ոչխարներին կերակրել անասնաշենքերին կից տարածքներում աճող թարմ խոտով: Դրանք անհարժեշտ է տարեկան 1-2 անգամ վարել և ցանել մշակովի խոտաբույսեր:

• Վաղ գարնանը, ընթացիկ տարում ծնված հորթերին, առաջին անգամ ճիճվաթափում են արոտավայր տեղափոխելուց 35-40 և երկրորդ անգամ՝ առաջին ճիճվաթափությունից 35-40 օր անց: Մեկ տարեկանից բարձր տարիք ունեցող հորթերին ճիճվաթափում են մեկ անգամ՝ արոտավայր տեղափոխելուց 35-40 օր անց:

• Գառներին ճիճվաթափում են արոտ տեղափոխելուց 14-16 օր անց, երկրորդ անգամ՝ առաջինից 15-20 օր անց և երրորդ անգամ՝ երկրորդից 25-30 օր անց: Մեծահասակ ոչխարներին ճիճվաթափում են հունիսի վերջերին կամ հուլիսի սկզբներին:

• Ցանկալի է մեկ անգամ ևս ճիճվաթափել սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին:

• ճիճվաթափության նպատակով օգտագործում են տրեմադտոդոզների ժամանակ առաջարկվող ճիճվամուղ դեղամիջոցները (ալբեն, ալբենոլ, բենդազ, բենվետ, բրովադազոլ, հելմիցիդ և այլն):

Որոճողների աղիքային ստրոնգիլյատոզների (հեմոնխոզ, նեմատոդիրոզ, բունոստոմոզ, խաբերթիոզ և այլն) նկատմամբ կատարում են հետևյալ կանխարգելիչ միջոցառումները.

• Տավարին առաջին անգամ ճիճվաթափում են ապրիլ-մայիս ամիսներին, երկրորդ անգամ՝ հուլիսին և երրորդ անգամ՝ օգոստոսին:

• Նույն տարում ծնված գառներին առաջին անգամ ճիճվաթափում են հուլիսի վերջերին կամ օգոստոսի սկզբին, երկրորդ անգամ՝ մսուրային պահվածքին անցնելուց հետո:

• Մատղաշին և մեծահասակ ոչխարներին առաջին անգամ ճիճվաթափում են գարնանը՝ արոտավայր տեղափոխելուց առաջ և երկրորդ անգամ՝ մսուրային պահվածքի անցնելու ժամանակ:

• Աղիքային ստոնգիլյատոզների նկատմամբ խորհուրդ է տրվում օգտագործել հետևյալ ճիճվամուղ դեղամիջոցները (ալբեն, ալբենոլ, բենդազ, բենվետ, բրովադազոլ, հելմիցիդ և հատկապես՝ կլոր ճիճուների համար նախատեսված՝ լևա-200, ռոլենոլ, իվերմեկտին և այլ պատրաստուկներով):

• Բացի ճիճվաթափությունից, արոտային ողջ սեզոնի ընթացքում, արոտավայրերն անհարժեշտ է փոխել 5-7 օրը մեկ անգամ, իսկ կենդանիների ջրումը կազմակերպել խմելու կամ հոսող գետերի ջրով:

Որոճողների շնչառական օրգանների ստրոնգիլյատոզների (դիկտիոկաուլյոզներ, մյուլլերիոզ, ցիստոկաուլյոզ և այլն) նկատմամբ խորհուրդ է տրվում կատարել հետևյալ կանխարգելիչ միջոցառումները.

• Նույն տարում կամ աշնանը ծնված հորթերին առաջին անգամ ճիճվաթափում են գարնանը՝ արոտավայր տեղափոխելուց 45-50 օր անց, և այսպես՝ 15-20 օրը մեկ անգամ, կենդանիներին պարբերաբար ճիճվաթափում են, մինչև արոտային շրջանի ավարտը:

• Ոչխարներին առաջին անգամ ճիճվաթափում են արոտավայր տեղափոխելուց 20 օր առաջ, երկրորդ անգամ՝ ամռանը և երրորդ անգամ մսուրային պահվածքին անցնելուց:

• Արոտային պահվածքի ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար փոխել արոտավայրերը:



• Արոտավայրերում մատղաշներին անհրաժեշտ է պահել բարձր տարիք ունեցող կենդանիներից առանձին:

• Կենդանիներին անհրաժեշտ է ջրել խմելու կամ էլ ապահով վայրերից բերված ջրով:

• Շնչառական օրգանների ստրոնգիլյատոզներով հիվանդ կենդանիներին խորհուրդ է տրվում ճիճվաթափել (ալբեն, ալբենոլ, բենդազ, բենվետ, բրովադազոլ, հելմիցիդ և հատկապես՝ կլոր ճիճուների համար նախատեսված՝ լևա-200, ռոլենոլ, իվերմեկտին և այլ պատրաստուկներով):

Վերը նշված կարգով կանխարգելիչ միջոցառումների կատարումը կկանխի որոճողների ճիճվային հիվանդություններով վարակումը և դրանց հետագա տարածումը:

Հ. Զ. ՆԱՂԱՇՅԱՆ
ՀԱԱՀ, անասնաբուժական գիտությունների դոկտոր

ՅԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՀԱՄԱՅՆՔԸ ԴԵՌ ՇԱՏ ԱՆԵԼԻՔՆԵՐ ՈՒՆԻ



Վերջերս Լոռու մարզպետարանում կայացած խորհրդակցության ժամանակ ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած ավանդի և բեղմնավոր աշխատանքի համար, Մեծ Պարնի համայնքի ղեկավար Գագիկ Պալյանին պարգևատրեց «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալով: Այդ առիթով Լոռու ԳԱՄԿ-ի աշխատակիցը զրուցել է համայնքի ղեկավարի հետ:

-Մեծ Պարնի համայնքում՝ շնորհիվ պետական աջակցությամբ իրականացվող գյուղատնտեսական ծրագրերի, ավելացել են և ցանքատարածությունները, և բերքատվությունը, և անասնագլխաքանակը. ինչ խնդիրներ ունի Մեծ Պարնին:

- Շնորհակալ եմ շնորհավորանքի համար, այս պարգևը գյուղի ողջ բնակչության աշխատանքի արդյունքն է: Իհարկե, շնորհակալ եմ նաև այն մարդկանց, ովքեր առաջադրել են իմ թեկնածությունը:

Մեծ Պարնի համայնքն ունի 15 հա վարելահող, որից մշակության տակ է դրված 1276 հա-ը, մնացածը սարափեշեր են: Ճիշտ է, 2014թ.-ին կառավարության կողմից տրամադրվող հակակարկտային կայաններից 2-ը բաժին հասավ համայնքին, սակայն, այդ հակակարկտային կայաններն ապահովում են միայն 200 հա տարածքի պաշտպանություն: Որպեսզի կարողանանք լիարժեք օգտագործել 1276 հա վարելահողը, մեզ անհրաժեշտ կլինի ևս մի քանի այդպիսի կայաններ: Գյուղատնտեսության գերակա հիմանախնդիրն այս պահին՝ մշակվող հողերում ոռոգման ներքին ցանցի բացակայությունն է: Հույս ունենք, որ մոտ ապագայում խնդիրը լուծում կստանա: Ճանապարհների խնդիրը՝ ինչպես շատ համայնքներում, այնպես էլ Մեծ Պարնիում, դեռ ամբողջական լուծում չի ստացել: Անցնող տարում համայնքում կատարվել են ներքին ճանապարհների հարթեցման աշխատանքներ:



-Պարոն Պալյան, ինչ ձեռքբերումներ է ունեցել համայնքը 2014 թ.-ին:

- Գյուղատնտեսական ձեռքբերումներից, առաջին հերթին, կնշեմ, որ 655 հա առաջին վերարտադրության էլիտային հացահատիկի ցանքերը հնարավորություն տվեցին ստանալ 50-60 ց բերք, միջին բերքատվությունը՝ 40 ց: Ծրագրային ձեռքբերումներից հարկ է նշել, որ ՄԵԾ Պարնի համայնքն այս տարի ընդգրկվել է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի» մեջ, որի շնորհիվ Մեծ Պարնիում ստեղծվել է «Արոտօգտագործողների միություն»՝ բաղկացած 157 անդամներից: Ծրագրի շնորհիվ համայնքի արոտներում այս տարի կտեղադրվի 6 խմոց, կբարեկարգվի դեպի Թռչկանի ջրվեժ տանող 2.2 կմ ճանապարհը, կկառուցվեն փարախ և հովվատուն: Ծրագրի շնորհիվ, այս տարի համայնքը համալրվել է նաև նոր ու ժամանակակից գյուղտեխնիկայով: Իսկ «Հայջրմուղկոյուղի» ընկերության կողմից 2014 թ.-ից շարունակվել են խմելու ջրի ներքին ցանցի արդիականացման աշխատանքները: Արդյունքում՝ մոտ 80-90 տնտեսություն ապահովվել է ջրով: 2015 թ. հուլիսին համայնքը կունենա շուրջօրյա ջրամատակարարում: Անցնող տարում համայնքը լուրջ հաջողություններ է գրանցել նաև մշակույթի, սպորտի և կրթության բնագավառներում:

2014թ.-ին ունեցանք նաև համայնքային ավտոբուս:

-Բացի «Արոտօգտագործողների միությունից», համայնքում կա՞ն այլ կոոպերատիվներ:

-Այս պահին այլ կոոպերատիվներ չունենք, բայց ստեղծվել է «Թռչկան» հասարակական կազմակերպությունը, որը զբաղվելու է համայնքային զարգացման ծրագրերով, բնապահպանական, հուշարձանների վերականգնման և սանմաքրման միջոցառումների կազմակերպմամբ:

Այս տարի, պատրաստվում ենք համայնքում հայ-գերմանական բարեգործական կազմակերպության հետ համատեղ, կատարել սանիտրական մաքրման աշխատանքներ: Ներկայումս «Թռչկան» ՀԿ-ն զբաղվում է 1941-1945 թթ, Հայրենական Մեծ պատերազմի 239 Մեծ Պարնեցի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողի հիմնանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքներով: Հուշարձանը Ջիմ Թորոսյանի հեղինակային աշխատանքն է, կառուցվել է դեռևս 1971թ.-ին՝ բարեգործների և համայնքի բնակչության ֆինանսական օժանդակության շնորհիվ: Կատարվել է նաև այգու հիմնում և խաչքարի տեղադրում (1988թ. երկրաշարժի զոհերի հիշատակի համար): Դեռ շատ աշխատանքներ ունենք կատարելու, որոնք ուղղված են համայնքի ծաղկմանը:

Ուզում եմ շեշտել նաև, որ մեր հաջողությունների համար շնորհակալ ենք նաև Լոռու ԳԱՄԿ-ին՝ պարբերաբար այցելությունների և խորհրդատվական աջակցության համար:

Հարցազրույցը՝ Կարինե Ադամյանի

Ագրոլրատու
Մարտ 25- ապրիլ 9, 2015 թ.
թիվ 7 (2062)

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ամեն տարի, գարնանից մինչ ուշ աշուն «Մուլտի-Ագրո» մեղվաբուծական ԳԱԿ-ի տնօրինությունը, մասնագետների հետ միասին, հանրապետության մեղվապահների համար կազմակերպում է խորհրդակցություններ և սեմինարներ: Մասնագետներ է գործուղում հանրապետության մարզեր. նրանք լինում են մեղվանոցներում, գործնական օգնություն ցույց տալիս մեղուների հիվանդությունների դեմ տարվող պայքարի, նաև բուժկանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ: Քննարկվում են մեղվաբույծների կողմից առաջ քաշված հուզող հարցերը և ներկայացվում գյուղատնտեսության նախարարությանը:

Մեղվապահների կողմից ուղարկված հիվանդ մեղվաընտանիքներից վերցրած նմուշները հիվանդությունների ախտորոշման լաբորատորիայում անվճար ստուգվում և մասնագետներ-

ի կողմից տրվում են համապատասխան ցուցումներ՝ հետագա բուժման աշխատանքներ իրականացնելու և անկումները կանխելու համար: Հանրապետության մեղու ունեցող քաղաքացիներին՝ մեղվաընտանիքները սովամահությունից փրկելու համար (ելնելով այս տարվա անբարենպաստ բնակլիմայական պայմաններից) օգնության կարգով, տնօրինության կողմից կատարվում է կանդիի «շաքարամեղրաբլիթի» վաճառք՝ ինքնարժեքի գնով:

Մինչև մեղուների գարնանային թռիչք կատարելը, նոզեմատոզ հիվանդության դեմ մեղվաընտանիքներին անհրաժեշտ է տալ կանդի (շաքարամեղրաբլիթ), Նոզեմատ կամ Նոզեմացիդ պատրաստուկի խառնուրդով (2,5 գ նոզեմատ՝ 5 կգ կամ 5գ նոզեմացիդ՝ 10 կգ կանդի պատրաստելու համար):

Կանդիի պատրաստման եղանակն է՝ 1 բաժին մեղր, 4 բաժին շաքարի փոշի՝ ավելացնելով դեղորայքը, որից հետո խառնել՝ դարձնելով այն խմորանման զանգված և տեղադրել շրջանակների վերին ձողերի վրա՝ ծածկաշորի տակ: Մաքրման թռիչքից հետո մեղվաընտանիքներին ջրամաններով տալիս են Ապիսոլ՝ ջրի հետ խառնած:

Այնուհետև կերակրում են Կովիտսան կամ Պչելոդար՝ մեղուների կենսունակությունը բարձրացնելու, դիմադրողականությունը ուժեղացնելու և մոր ձվարկությունը խթանելու համար. (Կովիտսան՝ 2,5 գ 10 լ շաքարաջրի, Պչելոդար՝ 20 գ՝ 10 լ շաքարաջրի հետ խառնելով: Ապիսոլ՝ 5 գ՝ 10 լ ջրի համար, որը պարունակում է նատրիումի քլորիդ, կոբալտ, յոդ, և այն ամբողջ սեզոնի ժամանակ կարելի է պահել ջրամաններում):

Քանի դեռ որդն ու ձուն բացակայում են, վարրոատոզ հիվանդության դեմ կատարվում են պայքարի աշխատանքներ՝ օգտագործելով Ֆումիսան, Վարրոսան, Ապիդեզ Վարրոադեզ և այլ ակարացիդ պատրաստուկներ՝ կախելով այն մեղվաընտանիքների մեջ միջշրջանակային տարածություններում: Մինչև 6-7 շրջանակ մեղվային զանգված ունեցող մեղվաընտանիքների համար կախել մեկ ժապավեն՝ երկրորդ և երրորդ մեղրահացերի արանքում, իսկ 10 շրջանակ և ավել մեղվի զանգվածային ուժ ունեցող մեղվաընտանիքներին տալ երկու ժապավեն. մեկը՝ 2-րդ և 3-րդ շրջանակների արանքում, իսկ մյուսը՝ 7-րդ և 8-րդ շրջանակների մեջտեղում: Կարելի է կատարել թրթնջկաթթվով բուժկանխարգելիչ միջոցառում՝ օգտագործելով թրթնջկաթթվի ջրային 2 %-ոց լուծույթը՝ ցողարկելով մեղվաընտանիքի միջշրջանակային տարածությունները՝յուրաքանչյուր պատող զանգվածին 10-12 մ/լ չափով: Լավ արդյունք է տալիս նաև թրթնջկաթթվի ծուխը, որի 5-6 գրամը նախատեսված է մեկ մեղվաընտանիքի ծխարկման համար, որը կարելի է կատարել նախօրոք՝ հանելով ավելորդ մեղրահացերը: Շրջանակներն իրարից 2 սմ հեռացնել, առանձնացնել նաև տաքացման բարձիկները և ծխարկել նախօրոք պատրաստված հատուկ ծխարկման գործիքի օգնությամբ կամ ծխարարի երկարացված կնճիթով արկանոցից ծուխ տալ՝ ծխարարի թեժ կրակի վրա գցելով 5 գ թղթի մեջ փաթաթած թրթնջկաթթուն՝ յուրաքանչյուր ընտանիքին ծխարկելով 7-8 անգամ:

Մարտ-ապրիլ ամիսներին, սողացող փռված թևերով մեղուների նկատմամբ, կանխարգելման նպատակով, անհրաժեշտ է կատարել Ակարասան պատրաստուկով միջոցառում ՝ երկու անգամ 7-8 օր ընդմիջումով: Ապրիլ–մայիս ամիսներին, փտախտային հիվանդությունների նկատմամբ կատարել կերակրում՝ Օքսիվիտ կամ Օքսիբակտոցիտ դեղամիջոցով: Կան նաև Օքսիվիտ ժապավեններ, որոնք օգտագործվում են 5-6 շրջանակ ունեցող մեղվաընտանիքների համար՝ մեկ հատ, իսկ տաս և ավելի շրջանակ զանգվածի դեպքում՝ երկու հատ՝ կախելով դրանք միջշրջանակային տարածություններում: Մայիս-հունիս ամիսներին, մանավանդ անձրևային եղանակներից հետո, նկատվում է ասկոսֆերոզ և ասպերգիլյոզ հիվանդություններ: Դրանք սնկային հիվանդություններ են: Հիվանդության նշաններն են՝ մեղվի թրթուրները սպիտակ են բրնձի հատիկի նման, հետո դեղնում են, այնուհետև սևանում: Մեղուները քանդում, թափում են արկանոցի առջև: Բուժման համար օգտագործում են Ասկոսան, Ունիսան, Ասկոնազոլ, Միկոասկ պատրաստուկները: Միկոասկը և Ասկոսանը ժապավեններ են. մեկ ժապավենը՝ 6-7 շրջանակ զանգված ունեցողի համար է, իսկ տասը և ավելի շրջանակ ունեցողին՝ երկու ժապավեն: Ունիսանը 1.5 միլիլիտրանոց տասը մեղվաընտանիքների համար է՝ շաքարաջրային լուծույթի միջոցով: Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, եթե տարին բարենպաստ է, կատարում են մեղրաքամ, իսկ եթե ոչ, ապա մինչև սեպտեմբերի 20-ը պետք է ավարտել կերապաշարի լրացման աշխատանքները: Որդ ու ձու չլինելու դեպքում, պետք է կատարել տզաթափում՝ համապատասխան ակարացիդ պատրաստուկներով:

«Մուլտի-Ագրո» ԳԱԿ
գլխ. տնօրեն՝
Ռ. Ծառուկյան
գլխ. անասնաբույժ՝
Հ. Չաղարյան

ՏՈՆԱՎԱՃԱՌ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻՆ

Օրերս կայացավ գարնանային բացօթյա տոնավաճառ՝ նվիրված Կանանց տոնին և Սուրբ Զատիկին: Միջոցառումը կազմակերպվել էր Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի (ՀԵԿԱ) կողմից՝ Քաղաքապետարանի աջակցությամբ, Կարապի լճի շրջակայքում:

Տոնավաճառին մասնակցեցին ՀՀ տարբեր մարզեր ներկայացնող կին արտադրողներ, վարպետներ, սիրիահայեր, ինչպես նաև միջազգային և տեղական կազմակերպություններ, ինչպիսիք են՝ Օքսֆամ-ը, UNHCR-ը, HDIF, Չինաստանի և շվեյցարացի դեսպանատները: Միջոցառմանը աջակցել էին նաև Բրազիլիայի դեսպանատունը, «Սիփան» հայրենական արտադրանքի հյութերի գործարանը:

Բազմաթիվ այցելուները, որոնց շարքում էր գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները, զբոսաշրջիկները հնարավորություն ունեին ձեռք բերել յուրօրինակ իրեր, ձեռագործ աշխատանքներ և գյուղատնտեսական ապրանքներ:

Միջոցառումն ուղեկցվեց մշակութային ծրագրով՝ երիտասարդ կատարողների մասնակցությամբ: Բարեգործական տոնավաճառների նպատակ է՝ խթանել նրանց ներգրավվածությունը երկրի հասարակական, մշակութային, տնտեսական կյանքում:

Այս տարի միջոցառման հասույթը կուղղվի Հայաստանում ձեռագործության ոլորտում կանանց ձեռներեցության խթանմանը:

Նելլի Սահակյան

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ

Որքան էլ երկրները հայտարարում են, որ գյուղատնտեսությունում հովանավորչություն չպետք է լինի, և այն պետք է զարգանա ազատ մրցակցային պայմաններում, այնուամենայնիվ, ոլորտը շարունակում է, բացառության կարգով, մնալ թույլատրելի միջամտությունների ներազդման պայմաններում:

Իսկ ո՞ր միջամտություններն են, որ թույլատրելի են, և որո՞նք են, որ թույլատրելի չլինելով հանդերձ, պետությունների կողմից, այնուամենայնիվ, իրականացվում են, բացառության կարգով, երբեմն էլ՝ գաղտնի (արդյոք գաղտնի լինելը տևական ժամանակ կարող է մնալ որպես այդպիսին):

Ըստ Առևտրի միջազգային կազմակերպության (ԱՄԿ)՝ պետք է տարբերել պետության կողմից գյուղատնտեսության աջակցության 3 կարգի մոտեցում: Առաջինը, որ կոչվում է դեղին զամբյուղ, ենթադրում է մթերքի արտադրության տարբեր տեսակի դոտացիաներ և սուբսիդիաներ, որոնք միջազգային քննարկումների և վեճերի առարկա են դառնում, քանի որ խեղում են շուկայի պատկերը, ուստի անհրաժեշտ է կիրառել հատուկ դեպքերում:



Գյուղատնտեսական սուբսիդիաների հիմնական ծավալները կենտրոնացված են աշխարհի զարգացած 3 կենտրոններում

Կապույտ զամբյուղում տեղ են գտել այն միջոցառումներն ու ծրագրերը, որոնք ուղղված են որևէ գյուղմթերքի արտադրության կրճատմանը: Սա ևս անցանկալի երևույթ է, քանի որ անուղղակի կերպով բերում է կրճատվող արտադրության մրցունակության արհեստական բարձրացմանը:

Եվ վերջապես՝ կանաչ զամբյուղը ներառում է այն բոլոր միջոցառումները, որոնք պայմանավորված չեն արտադրողների անմիջական ֆինանսավորման հետ, քանի որ միջոցները հատկացվում են գյուղական ինֆրակառուցվածքների, ագրարային հետազոտությունների, անասնաբուժական համակարգի, էկոլոգիական վիճակի, հողերի բերրիության բարելավմանը: Այս աջակցությունը որևէ ուղղակի կապ չունի միջազգային առևտրի հետ, և ցանկացած պետության կողմից կարող է լինել անսահմանափակ: Ինչպես երևում է գրաֆիկից, իրոք որ՝ մեծ թվեր է կազմում՝ հատկապես զարգացած երկրներում, որոնց պետական աջակցությունը, սուբսիդիաների ձևով, կազմում է ագրարային հատվածի արտադրանքի 35-45 %-ը: Նման արդյունքը տվյալ երկրի ֆերմերներին առավելություններ է տալիս միջազգային շուկաներում՝ շատ անգամ նրանց մրցակիցներին մեծ վնասներ հասցնելով (տարիներ առաջ Մալիի և աֆրիկյան ևս մի քանի երկրների բամբակագործական տնտեսությունների ավերումը միակ օրինակը չէ): Սակայն, միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ այդ երկրներն, ընդհանուր առմամբ, ավելի մտահոգված են ոչ այդքան արտադրանքի ավելացմամբ, որքան բնագավառի էկոլոգիական ստանդարտների բարելավումով, ֆերմերների բարեկեցության և երկարատև զարգացման մեխանիզմների ապահովումով: Ինչպես նշում են բնագավառի հետազոտական հեղինակավոր կենտրոնները, երկրի գյուղատնտեսության վերջին տասնամյակների կայուն զարգացումը 50 %-ով պայմանավորված է նրանով, որ գյուղատնտեսական գիտությունը, կրթությունը և խորհրդատվությունը ֆինանսավորվել են ըստ պահանջի:

Զամբյուղների համեմատական վերլուծությունը, ըստ երկրների, ցույց է տալիս, որ չնայած որոշ պետություններ չարաշահում են սուբսիդիաներն ու դոտացիաները, այնուամենայնիվ, դա չի կարող բերել տևական հաջողության, որն ապահովվում է հիմնականում կանաչ զամբյուղի հզորացմամբ: Այդ է վկայում այնպիսի արդյունավետ ագրոարտադրող երկրների օրինակը, ինչպիսիք են՝ Ավստրալիան, Կանադան, Նոր Զելանդիան և վերջերս նրանց միացած Բրազիլիան ու Արգենտինան:

Վ Հ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

Մամխենի /Սպինոզա/

Հայկական տարանուններն են՝ կոկոնենի, մամոխի, փշաթուփ, փշասալոր

Դեղաբույսի նկարագրությունը

Վարդազգիներին պատկանող, փշոտ թուփ է՝ ձվաձև, ատամնաեզր տերևներով: Ծաղիկները մանր են, հնգաթերթ, սպիտակ, դառը նշի հոտով: Պտուղը կորիզապտուղ է, կլոր, մուգ գույնի, թթվաքաղցր, տտիպ համով: Ունի գորշամոխրագույն, մոխրավուն, թեթևակի ճաքճքած կեղև: Ծաղկում է գարնանը՝ մինչև տերևների դուրս գալը, պտղակալում հուլիս-օգոստոս ամիսներին: Բազմանում է սերմերով և արմատային շյուղերով՝ հաճախ տալով անանցանելի, փշոտ բուսուտներ:

Բույսը բավականաչափ չորադիմացկուն է և լուսասեր: Աճում է գլխավորապես մեր հանրապետության անտառատափաստանային գոտիներում, դաշտերում, անտառներում և բացատներում:

Քիմիական բաղադրությունը

Պտուղները պարունակում են մինչև 9,3% շաքար, 1,7% խնձորաթթու, ցիանային միացություններ, պեկտինային, բուրավետ և բաղադրիչ նյութեր, վիտամիններից՝ C, կարոտին, B_1, B_2, PP, E:

Բուժական նշանակությունը

Բուժման համար օգտագործում են բույսի ծաղիկները և պտուղները, որոշ դեպքերում՝ նաև տերևները, կեղևը և արմատը: Ծաղիկները հավաքում են լրիվ բացվելուց հետո: Դրանք չորացնում են բացօթյա, միջանցիկ քամու տակ, փաթաթում թղթով ու պահում չոր տեղում: Պտուղները հավաքում են առաջին սառնամանիքից հետո, երբ կորցնում են տհաճ համը, չորացնում են արևի տակ կամ վառարանի ջեռոցում: Նշենք, որ դեղաբույսը կիրառվում է միայն ժողովրդական բժշկության մեջ:

Մամխին, որպես դեղամիջոց, ունի կիրառման հին պատմություն: Այսպես, Հին Հռոմի և Հին Հունաստանի բժիշկները դեղաբույսի պտղահյութը օգտագործել են դիզենտերիայի ժամանակ: Աշխարհի տարբեր ժողովուրդների բժշկության մեջ մամխենու պտուղները, թարմ վիճակում կամ եփուկի ձևով, օգտագործում են որպես հակաբորբոքիչ և կազդուրիչ միջոց՝ աղիների խանգարումների, ձայնի խզման և հազի ժամանակ: Այն ունի նաև նյութափոխանակությունը կարգավորող և «արյունը մաքրող» հատկություններ: Դրանք, առանց չափաքանակի խիստ պահպանման, նշանակվում են երիկամների, լյարդի և մաշկային մի շարք հիվանդությունների ժամանակ: Ստամոքսի կծկողական բնույթի ցավերի դեպքում, այս եփուկը ցուցաբերում է ցավը հանգստացնող և սպազմը վերացնող հատկություն:

Չեխական բժշկության մեջ պտղաթեյն օգտագործում են մաշկային ցանավորումների և հազի ժամանակ: Բուլղարական ժողովրդական բժշկությունում տերևների եփուկը նշանակում են մաշկային ախտահարումների և միզուղիների բորբոքումների ժամանակ՝ որպես միզամուղ և հակաբորբոքիչ:

Այլ օգտակար հատկանիշներ: Մամխու պտուղները սննդային արժեքով գերազանցում են սալորին, դեղձին, հոնին, տանձին, խնձորին, կիտրոնին և նարինջին (Պոկրովսկի Ա.Ա.): Հասուն պտուղներից պատրաստում են գինի, մուրաբա, կոմպոտ, սուրճի փոխմիջոց, չիր, պաստեղ, ցուկատ, մարինադ, քացախ, կվաս, իսկ կերակրի մեջ օգտագործում են որպես համեմունք:

Ֆրանսիայում լրիվ չհասունացած պտուղները մարինադի ձևով օգտագործում են ձիթապտղի փոխարեն, տերևներից պատրաստում են վիտամինային թեյ: Մամխենու կարմրադարչնագույն բնափայտը շատ ամուր է և պիտանի ատաղձագործական մանր իրեր պատրաստելու համար: Տերևներով դաբաղում են կաշին, իսկ սերմերից ստացվող յուղն օգտագործում են տեխնիկական նպատակով: Մամխին մեղրատու է և ունի որոշակի դեկորատիվ նշանակություն: Այն աճեցնում են առվաեզրերը և հեղեղատներն ամրացնելու ու անջրպետներ ստեղծելու նպատակով: Այն նաև լավ պատվաստակալ է դեղձենու, սալորենու և այլ ծառատեսակների համար: Պտուղներով ձմռան ամիսներին սնվում են թռչունները:

Նարիլաթա – ծաղիկ՝ մերկ կնոջ պատկերով

Նարիլաթա (Narilatha-Nareepol) - բույսն աճում է Հիմալայներում, Հնդկաստանում, Շրի-Լանկայում և Թաիլանդում: Նարիլաթա թարգմանաբար նշանակում է ծաղիկ՝ մերկ կնոջ պատկերով: Ծառը ծաղկում է 20 տարին մեկ անգամ: Ծառի պտուղները մերկ կնոջ մարմին են հիշեցնում:

Բուդդայական դիցաբանության համաձայն՝ նրանց Աստված Հինդրան հրամայել էր աճեցնել Նարիֆոն կոչվող 12 ծառ, որոնց ծաղիկները շատ քաղցր հոտ էին արձակում և բացվելով՝ պատկերում 16-ամյա մերկ աղջիկների: Ըստ նրա՝ աճեցված ծաղիկների ազդեցությունն այնքան մեծ էր, որ դա կարող էր պաշտպանել իր գեղեցկուհի կնոջը մարմնական տանջանքներից, յոգերից և այլ չար ուժերից, ովքեր ապրում էին անտառներում, որտեղ հաճախ էր զբոսնում նրա կինը:

Բնականաբար ծաղկի արտասովոր տեսքը կասկածի տակ դրեց վերջինիս իրական լինելը: Մարդիկ սկսեցին դրան վերաբերվել թերահավատորեն և այն համարում էին գեղեցիկ, բայց մտացածին: Սակայն բոլոր ուսումնասիրությունները վկայում են, որ ծառն իրականում գոյություն ունի: Այն համարվում է բնության հրաշք ստեղծագործություն, հազվագյուտ ծաղիկ: Հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ ծաղիկը խոլորձի տեսակ է, պատկանում է խոլորձազգիների ընտանիքին, նման է խոլորձի հաբանարիա և գեներա տեսակներին: Խոլորձի /օրխիդեայի/ ծաղիկը նման է նրբաճաշակ արվեստի գործի (Օրխիդեան մերձարևադարձային բույս է, այդ բույսի տեսակներից մեծ մասը կարելի է գտնել մերձարևադարձային անտառներում, որտեղ նրանք աճում են ծառերի ճյուղերի կամ ցողունի վրա): Բնությունը մեծագույն ճարտարապետ է:

Հետաքրքիրն այն է, որ նարիլաթայի ծաղկման վայրերը կարելի է օգտագործել՝ որպես միջոց զբոսաշրջության զարգացման համար, բայց, ընդհակառակը, դրա գտնվելու վայրը շատ անգամ, նույնիսկ, թաքցնում են: Գիտնականներին դեռևս չի հաջողվել պարզել թաքցնելու բուն պատճառը:

Բույսի նկարագրություններ կան Թաիլանդի սուրբ գրություններում և կրոնական այլ տեքստերում: Պալարի այս տեսակն իր սերմերով, չորացած վիճակում գտնվել է Լաոսում և վաճառվել զբոսաշրջիկներին: Շատ հաճախ թաիլանդցիներն այն պահել են իրենց տանը՝ որպես թալիսման:

Նարիլաթայի տեսակների ուսումնասիրության ժամանակ առանձնացվել է մարդանման ծաղկի 3 տեսակ՝ մերկ կինը՝ ձեռքերը առջևում խաչված, ձեռքերն ուղիղ իջեցրած և ձեռքերը գլխավերևում պահած:

Թաիլանդցիները պնդում են, որ այն շատ դուրեկան հոտ ունի, որը շատ հեռու է տարածվում:

Թարգմանությունը՝
Լիլիթ Գասպարյանի

Գենետիկորեն մոդիֆիկացված մթերքներն առաջին հայացքից մի շարք առավելություններ ունեն օրգանական մթերքների նկատմամբ, սակայն դրանք կարող են վնասակար լինել մեր առողջության համար: Այդ մասին նշել է բնապահպան և հասարակական գործիչ Կարինե Դանիելյանը: Ըստ նրա՝ շատերը պնդում են, որ ԳՄՕ-ն կարող է փրկել մարդկությանը սովամահ լինելուց, սակայն, բոլոր հնարավոր ռիսկերն այս պահին հնարավոր չէ հաշվարկել, այդ պատճառով էլ օգտագործել այդ մթերքները, որպես սնունդ, առայժմ վաղ է:

Մասնագետի տեղեկացմամբ՝ գենետիկական մոդիֆիկացիայի դեպքում, այս կամ այն օրգանիզմի գենոտիպը կարող է փոփոխվել գենային ինժեներիայի տարբեր մեթոդների շնորհիվ: Օրինակ՝ կարելի է որևէ բույսի փոխպատվաստել ձկան գենը և դրանով այն դարձնել ցրտադիմացկուն: Իսկ պարզել, թե ինչպես է ԳՄՕ-ն ազդում մարդու առողջության վրա, այս պահին հնարավոր չէ, դրա համար մի քանի սերունդ պետք է փոխվի: Սակայն, մասնագետի կարծիքով՝ բացառված չէ, որ ԳՄՕ-ի պատճառով կարող են բազմաթիվ ալերգիկ ռեակցիաներ ի հայտ գան: Բացի այդ՝ ԳՄՕ-ն կարող է նաև ազդել միկրոֆլորայի և մարդու աղեստամոքսային համակարգի վրա: Այն կարող է նաև կապված լինել քաղցկեղի տարածման (այս էֆեկտը, բնապահպանի խոսքով, ի հայտ էր եկել առնետների վրա անցկացված փորձարկումների ժամանակ), ճարպակալման և հորմոնալ խախտումների հետ:

Բնապահպան Հրանտ Սարգսյանի կարծիքով՝ ԳՄՕ-ով սնվող առնետների երրորդ սերունդն արդեն չի կարող բազմանալ: Հատկանշական է նաև, որ հողի այն հատվածում, որտեղ առնվազն մեկ տարի գենետիկորեն մոդիֆիկացված բույսեր են աճել, կարող են օրգանական բույսերն այևս չաճել:

Այսօր խնդիրն այն է, որ Հայաստանում չենք կարող ստույգ իմանալ, թե ինչ ենք ուտում: Հնարավոր չէ պարզել, ինչ սերմերից են աճեցված այն մրգերը կամ այն բանջարեղենը, որը Հայաստան է բերվել այլ երկրից: Տեսականորեն որոշ դեպքերում կարելի է պարզել ԳՄՕ-ի առկայությունը հատուկ լաբորատորիաներում, սակայն Հայաստանում նման ստուգումներ առայժմ չեն իրականացվում:

NEWS.am Medicine

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
2015 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ագրոլրատու»
թերթի

1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 120 դրամ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ամսագրի

1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Ատփաշե» կազմակերպությունները

Ագրոլրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ Լ. ՇԱԽՆԱԶԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 34
ստորագրված է տպագրության 08.04.2015 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա